ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սարալանջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սարալանջ, 091 11 38 38, saralanj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 27-Ա

ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Հաստատել Սարալանջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 30-ի արտահերթ թիվ 9 նիստի օրակարգը.
   1) Սարալանջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 25-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
3. ՄՀԵՐՅԱՆ ԱՐԱ
4. ՔԵՐՈԲՅԱՆ ՔԵՐՈԲ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԳԵՂԱՄ ՁԻԼԻՖՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սարալանջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սարալանջ, 091 11 38 38, saralanj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 28-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սարալանջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի <<2017 թվականի համար Սարալանջ համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N 25-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
3. ՄՀԵՐՅԱՆ ԱՐԱ
4. ՔԵՐՈԲՅԱՆ ՔԵՐՈԲ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԳԵՂԱՄ ՁԻԼԻՖՅԱՆ**

Հավելված
Սարալանջ համայնքի ավագանու
2016թ.դեկտեմբերի 12 թիվ 25-Ն որոշման

հ/հ	Տեղական տուրքերի տեսակները	Օրենքով սահմանված դրույքաչափերը /դրամ/	Առաջարկվող դրույքաչափերը /դրամ/
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝հիմնական օբյեկտների համար՝		
1)	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև	0-15.000	5.000
2)	սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝		
ա)	201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	0-30.000	6.000
բ)	501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	0-50.000	10.000
գ)	1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	0-50.000	30.000
դ)	3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	0-100.000	50.000
	ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝		
3)	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	0-3.000	2.000
4)	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև	0-5.000	3.000
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	0-3.000	2.000
1)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև		
2)	բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի		

	ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.		
3)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը		
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև	0-5.000	3.000
4.	Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝		
1)	ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում	0-10.001	2.500
	բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում	0-13.001	2.500
2)	ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում	0-10.001	2.500
	բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում	0.13.001	2.500
5.	Համայնքի տարածքում՝		
1)	բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.	0-350	350
2)	հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	150.000-200.000	160.000
3)	խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	30.000-60.000	30.000
4)	համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝		
4.1)	հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **ա)** մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	0-5.001	3.000
	բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	0-10.001	3000
5^1	համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝	50.000	30.000
	Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի,		

6.	շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝		
1)	առևտրի օբյեկտների համար՝	25.000-50.000	30.000
2)	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	50.000-100.000	50.000
3)	բաղնիքների (սաունաների) համար՝	200.000-500.000	200.000
4)	խաղատների կազմակերպման համար՝	500.000-1.000.000	500.000
5)	շահումով խաղերի կազմակերպման համար՝	250.000-500.000	250.000
6)	վիճակախաղերի կազմակերպման համար՝	100.000-150.000	100.000
7.	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝		
1)	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	1.000-2.000	1.000
2)	թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2.500-3.500	2.500
3)	այլ արտաքին գովազդի համար՝	500-1.500	1500
4)	մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝	3.000-5.000	3.000
5)	դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք ՝ տվյալ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով	700	175
8.	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	0-10.000	3.000
9.	Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	50.000-100.000	50.000
10.	Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	0-10.000	5.000
	Տեղական վճարների տեսակներ		
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.		5000
2.	Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		10000
3.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման		5.000

	համար՝ մասնակիցներից վճարներ		
4.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել՝		
1)	Կենցաղային աղբի համար՝ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական		50
2)	Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսական		1500
5.	Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել		500

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԶԻԼԻՖՅԱՆ